Ժիլբերթ Մեշքանբարյանս

ՎԵԶԻՐԻ ԵՎ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր – Սեֆյան Իրան, վարչական տարածք, Թազքիրաթ ալ-մուլուք, պաշտոններ, վեզիր, քալանթար, վավերագիր:

Սեֆյան Իրանի վարչաքաղաքական կառուցվածքի պատմության ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի ինչպես իրանագիտության, այնպես էլ հայագիտության տեսանկյունից, որ հնարավորություն է ընձեռում լուսաբանելու և բացահայտելու Սեֆյան Իրանում վարչական պաշտոնների յուրահատկությունները, ինչպես նաև դրանց առընչությունը հայկական իրականության հետ: Սեֆյան Իրանի վարչական միավորների և պաշտոնների մասին ծավալուն տեղեկությունների ենք հանդիպում «Թազքիրաթ ալ-մուլուք»[1] երկում, ուր գրքի չորրորդ և հինգերորդ գլուխները տեղեկություններ են պահպանել վեզիրների և քալանթարի աշխատանքների և պարտականությունների վերաբերյալ:

Սեֆյան Իրանի վարչական համակարգում վեզիրների գործունեությանը անդրադառնալուց առաջ նախ ծանոթանանք շահից հետո առաջին պետական պաշտոնյայի՝ է'թեմադ ալ-դովլեի[2] (կամ վեզիրե ազամ, որ նույնն է, ինչ մեծ վեզիր) գործունեությանը: Է'թեմադ ալ-դովլեն Իրանի շահից հետո երկրի երկրորդ գլխավոր պաշտոնյան էր: Պետության այդ բարձրագույն պաշտոնը կրողի՝ է'թեմադ ալ-դովլեի աշխատանքը շատ պատասխանատու և բարդ էր: Է'թեմադ ալ-դովլեին էին ենթարկվում ավելի ցածր պաշտոն ունեցող վեզիրները, գրագիրները և մնացյալ պաշտոնյաները: Նա նաև արքունի գրասենյակների պատասխանատուն էր: Դիվանում պատրաստված ոչ մի նամակ առանց նրա ստորագրության և կնիքի վավերական չէր համարվում: Նրա միջոցով էին որոշվում և հաստատվում եկամուտների բաշխման, աշխատավարձերի հաստատման հարցերը: Այս բնագավառում նա գրեթե անսահմանափակ իրավունքներ ուներ: Նա էր վերահսկում բանակի աշխատավարձերի վճարման, զինվորականների ներկայության, նրանց փաստաթղթերի պատրաստման ու պահպանության հարցերը: Երկրի ֆինանսական միջոցների տրամադրումը ամբողջովին նրա կողմից էր կարգավորվում: Հարկերի և տուրքերի որոշումը, եկամուտների հավաքագրման

[1] Համաձայն պահպանված տեղեկությունների՝ գիրքը պատրաստվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և գրի առնվել Սեֆյան Իրանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամիայի միջոցով Սեֆյան հարստության անկման և աֆղանների իշխանության սկզբնական տարիներին: Նրա բովանդակությունը վերաբերում է Սեֆյան Իրանի վարչական կառուցվածքին, արքունական պաշտոններին, հասարակության մեջ եղած բաժանումներին, արհեստներին: Գրքում բացատրվում են մարզերի հաքիմների պարտականությունները, խոսվում նրանց եկամուտների մասին, ներկայացվում է երկրի զինվորական կառույցը:

[2] Պարսկերեն նշանակում է պետության վստահելի:

աշխատանքի կազմակերպումը, երկրի ֆինանսական ապարատի գործունեությունը նրա միջոցով և հսկողությամբ էին կատարվում[1]:

Համաձայն եղած կարգի նա էր ընդունում օտար երկրներից Իրան ժամանած դեսպաններին և պատվիրակություններին: Հիմնականում նրա միջոցով էին վարվում բանակցությունները և պատրաստվում գործարքների համաձայնա-գրերը: Նա շահի վստահված անձն էր, առանց նրա համաձայնության շահը որևէ համաձայնագրի հաստատմանն իր հավանությունը չէր տալիս[2]: Այնուամենայնիվ, հաճախ նրա որոշումները կարող էին փոփոխվել հարեմի բնակիչների՝ ներքինիների կամ շահի սիրելի կանանց միջամտության հետևանքով[3]: Նշված պարտականություններից բացի նա կատարում էր մի շարք այլ աշխատանքներ, որոնք շահի կողմից իրեն էին հանձնարարվում. օրինակ, մայրաքաղաքի անվտանգության ապահովումը. թեև իրականում դա դարուղայի[4] պարտականություններից էր[5]:

Է'թեմադ ալ-դովլեն որոշված աշխատավարձ չուներ, սակայն պաշտոնը ստանալուն պես, երբ նրան էին հանձնվում համապատասխան զարդաքանդակ կնիքը և թանաքը, նա ստանում էր մի շարք արտոնություններ: Է'թեմադ ալ-դովլեին հատկացվող նովրուզի (պարսկական նոր տարի) նվերները, որոնք անպայման ստուգվում և հաստատվում էին շահի կողմից, կազմում էին՝ 1000 աշրաֆի ու 12 ձի: Նա մի շարք գումարներ էր ստանում ջիրե[6], մահալներից ռասմալ-վոզարա[7] և էն'ամե համեսալե[8] անվան տակ, որոնց ընդհանուր գումարը իրար հետ վերցրած՝ ներկայանալի թիվ էր կազմում: Ռասմալ-վոզարան կազմում էր 803 թուման և 3943 դինար, Սպահանից ստացվող էն'ամե համեսալեն կազմում էր 20 թուման, դրան գումարած զանազան տեսակի մթերքներ (բրինձ, յուղ և այլն), ռոսում անվան տակ ամեն անգամ ամիրներին և բարձրաստիճան պաշտոնյաներին տրվող թիուլի յուրաքանչյուր թումանի համար նա ստանում էր 330 դինար, ինչպես նաև նրանց տրվող տարեկան վճարներից 220 դինար, բարաթներից (պարտամուրհակ)՝ 110 դինար և վարձակալությունների համար 500 դինար, իսկ ամիրների սոյուրղալներից[9], եկամուտներից և հաղոլսայից[1] և աղթաից[2]՝ 660 դինար[3]:

---

[1] *پیتر جکسون/ لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت دوم) دوره صفوی،ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب، 1387*: (Փիթեր Ջաքսոն/ Լորանս Լաքհարթ, Թարիխե Իրան Քամբրիջ, (ջելդե շեշոմ, դեսմաթե դովոմ) դորեհ Սաֆավի, Թարջոմե Թեյմուրե Ղադերի, Թեհրան, Էնթեղարաթե Մահթաբ,1387(2008), էջ 215:

[2] *شوستر والسر سیبیلا، ایران صفوی از دیدگاه سفرنامه های اروپائیان(پژوهشی در روابط سیاسی و اقتصادی ایران (1502-1722)، ترجمه و حواشی دکتر غلامرضا ورهرام، تهران، انتشارات امیر کبیر،1364*, (Շուսթեր Վալսեր Սիբիլա, Իրան ազ դիդգահ-ե սաֆարնամեհա-յե ուրուփահյան, Թեհրան, Էնթեշարաթե Ամիրքաբիր,1364), էջ 29:

[3] 1382 سفرنامه تاورنیه، ترجمه: حمید ارباب شیرانی، تهران (Սաֆարնամե Թավերնիե, թարջոմե Համիդ Արբաբ Շիրանի, Թեհրան, 1382(2003), էջ 244:

[4] Դարուղե -داروغه – Ոստիկանապետ, մոնղոլների ժամանակշրջանում ոստիկանների գլխավորը դարուղե էր կոչվում, իսկ սեֆյան ժամանակաշրջանում մայրաքաղաքի հաքիմն էր դարուղա կոչվում:

[5] 1381 سفرنامه پیترو دلاواله، مترجم: شعاع الدین شفا، تهران (Սաֆարնամե Փիեթրոդելավալե, մոթարջեմ: Շոաելդինե շաֆա, Թեհրան, 1381(2002),էջ 86 և 126:

[6] Ջիրե – جیره- պարսկերեն նշանակում է պարենի բաժին, որը այս պարագային նշանակում է պարենից վեզիրին հատկացվող բաժինը:

[7] Ռասմ ալ-վոզարա –رسم الوزرا- վեզիրի համար շրջաններից գանձվող հարկագումարը:

[8] Էն'ամե համեսալե –انعام همه ساله-,պարսկերեն այդպես էր կոչվում որպես նվեր ամեն տարի վճարվող տուրքը:

[9] Սոյուրղալ - سیورغال- հողատիրության պարգևական եղանակը կոչվում էր սոյուրղալ, որը հարկային իմունիտետի իրավունքով տրվում էր զինվորականությանը, ամիրների՝ թյուրք ու քուրդ ցեղերի առաջնորդներին և հոգևորականությանը:

«Թազքիրաթ ալ-մուլուքում» վեզիրե ազամի պաշտոնը ներկայացնող մասում ընթերցում ենք հետևյալ բացատրությունը, որը ամբողջությամբ համապատասխանում է ժամանակի այլ սկզբնաղբյուրների մեջ պահպանված նյութերին. «Վեզիրե ազամը բարձրագույն դիվանի և Իրանի պետության գլխավոր վստահված անձնավորությունն էր երկրի բազմաթիվ և գլխավոր հարցերի լուծման գործում՝ երկրի բոլոր ամիրների աշխատանքների, սահմանային վիլայեթների, առևտրի, պետական հարկերի, արքունական գանձարանից ծախսված գումարների պատասխանատուն: Իրանի այլ շրջաններից, ինչպես նաև մայրաքաղաք Սպահանից գանձված գումարները ու բոլոր առևտրական գործողությունները առանց հարգարժան վեզիրե ազամի իմացության տեղի չի ունենում: Պաշտոնների համար հատկացվող գումարները և այլ գումարներ ևս պիտի առաջին հերթին նրա կնիքով հաստատվեն, այնուհետև արքայական կնիքով զարդարվեն.....»[4]:

Մյուս վեզիրների գործունեությանը ևս սեֆյան համակարգում կարևոր տեղ է հատկացվել: Վեզիրների գլխավոր պարտականությունը ֆինանսական հարցերով զբաղվելն էր: Երբ վեզիրը գործուղվում էր որևէ վիլայեթ, նրան էին հանձնում գործունեության ուղեցույց, որի համաձայն նա պիտի ղեկավարեր տվյալ վիլայեթը[5]: Վեզիրն անձամբ պիտի ներկայանար իր աշխատանքի վայրը, սակայն հաճախ նրանք մնում էին արքունիքում և իրենց փոխարինող օգնականներին էին ուղարկում շրջաններ, որի հիմնական պատճառը արքունիքում մշտական ներկայություն ապահովելը և հակառակորդների հետ մրցակցությունն էր:

Վեզիրն էր նշանակում զաբեթներին, որոնք գանձում էին հարկերը իրենց հատկացված շրջաններից և տարին մեկ անգամ հանձնում արքունի գանձարանին[6]: Վեզիրը ոչ միայն հարկերի գանձման պատասխանատուն էր, այլ նաև պետք է հետամուտ լիներ վիլայեթի տնտեսության զարգացմանը: Նա էր գյուղացուն տրամադրում սերմացու՝ օժանդակելով գյուղատնտեսության զարգացմանը, վերահսկում ջրանցքների կառուցման և վերանորոգման գործերը: Սովորաբար Սեֆյան շահերը յուրաքանչյուր վիլայեթում ունեին իրենց անձնական կալվածքը (խասսեե կամ խալեսե), վեզիրները պարտավոր էին դրանց աշխատանքները վերահսկել: Բնականաբար, շահի համար վեզիրների աշխատանքի այս բաժինը շատ կարևոր էր[7]:

---

[1]Հաղոլսայ –حق السعی - եկամուտ, կամ աշխատանքի համար վճարվող պարգևավճար, որ տրվում էր սեֆյան գործակատարներին:

[2]Աղթա - اقطاع- հողատիրության այն տեսակն էր, ով հողատերը ազատվում էր հարկերից տուրքերից:

[3]1362،باستانی پاریزی محمد ابراهیم، سیاست و اقتصاد عصر صفوی، تهران (Բասթանիե Փարիզի Մոհամմադ Էբրահիմ, Սիասաթ վա էղթեսադե ասրե Սաֆավի, Թեհրան, 1362), էջ180-181:

[4]دکتر محمد دبیر سیاقی، تصحیح و نشر تذکره الملوک، ، انتشارات امیر کبیر،تهران، 1378 میرزا سمیعا، تذکره الملوک(Դոքթոր Մոհամմադ Դաբիրսիաղի, Թասհիհ վա նաշր Թազքիրաթ ալ-մուլուք վա սազեմանե էդարիե հոքումաթե Սաֆավի, Էնթեշարաթե Ամիրքաբիր, Թեհրան 1378), էջ 5-6:

[5] ترجمه: حسین هژیریان/ حسن اسدی، تهران، 1388فریر رانلد دبلیو ، برگزیده شرح سفرنامه شاردن،(Ֆրիեյր Ռանելդ Դաբլյու, բարգոզիդե Շարհե Սաֆարնամե Շարդեն, թարջոմե: Հուսեյնե Հաժիրիան/ Հասանե Ասադի, Թեհրան, 1388), էջ 176:

[6] میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، تصحیح دکتر یوسف رحیم لو، انتشارات دانشگاه فردوسی، مشهد، 1371(Միրզա Ալինաղիե Նասիրի, Ալղաբ վա մավաջեբե դորե սալաթինե Սաֆավի, թասհիհե դոքթոր Եուսեֆե Ռահիմլու, Էնթեշարաթե դանեշգահե Ֆերդոսի, Մաշհադ, 1371), էջ 850:

[7]دکتر محمد دبیر سیاقی، تصحیح و نشر تذکره الملوک، ، انتشارات امیر کبیر،تهران، 1378میرزا سمیعا، تذکره الملوک(Դոքթոր Մոհամմադ Դաբիր Սիաղի, Թասհիհ վա նաշր Թազքիրաթ ալ-մուլուք վա սազեմանե էդարիե հոքումաթե Սաֆավի, Էնթեշարաթե Ամիրքաբիր, Թեհրան 1378), էջ 45:

Քաղաքային կյանքի վերահսկման տեսակետից վեզիրն ուներ քաղաքի շուկայական (բազարի) առևտրի և դրա եկամուտներից հասանելիք տուրքերի գանձման պարտականությունը: Վեզիրները քաղաքի ոստիկանապետի հետ համաձայնեցված՝ նշանակում էին համքարությունների ներկայացուցիչներին: Ֆինանսական հարցերի կարգավորումից զատ վեզիրները պարտավոր էին հսկել զանազան բնակավայրերի հաքիմների (կառավարիչների) գործունեությունը, որ նրանց կողմից հայտնաբերված անարդարությունների արդյունքում գյուղացին և հողագործը չտուժեին: Այդ հանգամանքը հավանաբար պայմանավորված էր նրանով, որ շահը մտահոգված էր երկրի քաղաքական իրավիճակով ապստամբություններ չլինեին, հարկերը ժամանակին հավաքվեին, և շահի գանձարանը լիքը լիներ: Նա պաշտպանում էր գյուղացիներին, որ նրանք չլքեին իրենց տրամադրված հողատարածքները:[1] Վեզիրների կարևոր պարտականություններից էր նաև շահի հյուրերի ընդունելությունը[2]: Վեզիրները համարվում էին շահի փոխանորդներն ու գործակալները վիլայեթներում: Շահը հակված էր վիլայեթների հսկողությունը ամբողջությամբ կենտրոնացնել նրանց ձեռքում: Իրականում պետական գանձարանը լցվում էր վեզիրների ջանքերի շնորհիվ[3]:

Իսկանդար բեգ Թորքաման Մոնշին իր «Պատմության» մեջ վեզիրների թվի մասին նշում է, որ «Դրախտաբնակ արքայի[4] կենդանության օրոք տասներկու հոգի էին»[5]:

Թեև վեզիրների(կամ նազիրների)[6] աշխատանքի էությունը այն էր, որ ուղղակիորեն վերահսկեին պետության ընդունած որոշումների իրականացումը, սակայն հասարակ ժողովուրդը հաճախ տնտեսական և հասարակական առումներով մեծ կորուստներ էր ունենում և ճնշման ենթարկվում վեզիրների կողմից: Շարդենն այդ կապակցությամբ նշում է. «.... այդ նազիրները անկուշտ էին: Նրանք իրենց պաշտոնները ստանում էին շահի մոր կամ նրա կանանց մեծ նվերներ վճարելու գնով, որի պահպանման համար ևս ավելին էին խոստանում և հարստահարում հասարակ ժողովրդին»[7]:

Փոքր շրջանների վեզիրներն իրենց աշխատանքային ծրագիրը իրականացնում էին համաձայն այն ծրագրի, որ հանձնարարվել էր մեծ վեզիրին և նրա հսկողությամբ: Վեզիրների նշանակումը և պաշտոնից հեռացումը շահի անմիջական վերահսկողությամբ էր կատարվում:

---

[1] سانسون، وضع ایران در زمان شاه سلیمان صفوی، به اهتمام تقی تفضلی، تهران، 1985، (Սանսոն, Վազե Իրան դար զամանե շահ Սոլեյմանե Սաֆավի, բե էհթեմամե Թաղի Թաֆազոլի, Թեհրան 1985), էջ 178-179:

[2] سفرنامه پیترو دلاواله، (Սաֆարնամե, Փիեթրոդելավալե, մոթարջեմ), նշվ. աշխ., էջ 208:

[3] کمپفر انگلبرت ، سفرنامه، ترجمه کیکاووس جهانداری، چاپ سوم، انتشارات خوارزمی، تهران، 1363، էջ 126-163 (Քեմփֆեր Ալնգելբերթ, Սաֆարնամե, Թարջոմե Քեյքավուսե Ջահանդարի, չափե սեվոմ, էնթեշարաթե Խարազմի, Թեհրան, 1363), նշվ. աշխ., էջ 126-163:

[4] Հեղինակն ի նկատի ունի՝ սեֆյան Շահ Աբբաս Ա-ին:

[5] اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، موسسه انتشارات امیر کبیر، تهران، 1392، (Իսքանդար Բեգ Թորքաման, Թարիխե Ալաամ Արայե Աբասի, Մոասեսե էնթեշարաթե Ամիրքաբիր, Թեհրան, 1392), էջ 159:

[6] Վեզիր հասկացությունը պաշտոնի անվանումն է, իսկ նազիր նշանակում է այն աշխատանքը, որ կատարում է վեզիրը այսինքն՝ վերահսկիչ, վերակացու: Վեզիրը իր կողմից վերակացու էր ընտրում, որ իրականում կատարում էին այն աշխատանքը, որ իրեն էր հանձնարարված, որին նազեր էին կոչում: Ժամանակաշրջանի գրականության մեջ հաճախ պաշտոնի անվանումը փոխարինվել է տվյալ աշխատանքի հետ և նույնանալով՝ օգտագործվել է մեկը մյուսի փոխարեն:

[7] برگزیده و شرح سفرنامه شاردن، (Բարգոզիդեհ վա շարհե սաֆարնամե Շարդեն), նշվ. աշխ., էջ 179:

«Թազքիրաթ ալ-մուլուք»ի մեջ մի քանի ենթագլուխ է հատկացված զանազան բնագավառներում վեզիրների գործունեությանը և նշված է վեզիրների անվանումները՝ Ալիջահ վեզիրե բոյութաթ, վեզիրե սարքարե ղուրչի, վեզիրե սարքարե ղոլաման, վեզիրե թոֆանգչիան, վեզիրե թուփխանե, վեզիրե սարքարե ֆեյզե ասար, վեզիրե դառ ալ-սալթանե Էսֆահան, վեզիրե սարքարե էնթեղալի: Նշված վեզիրներից գլխավորը վեզիրե բոյութաթն է, որը արքունական արհեստանոցների (բոյութաթ) պատասխանատուն էր, պաշտոնի կարևորությունից ելնելով՝ նրան ալիջահ (պարսկ. բարձրաստիճան) տիտղոսն էին տվել: Վեզիրե բոյութաթը ստուգում էր արհեստանոցների աշխատանքների հաշվետվությունները, մատյանները, կնքում դրանք և սահեբջամների[1] միջոցով վերահսկում հարկերի գանձման գործընթացը: Նա էր որոշում և վճարում արհեստանոցներում աշխատող բանվորների աշխատավարձերը[2]: Վեզիրե սարքարե ղուրչին, վեզիրե թոֆանգչիան և վեզիրե թուփխանեն այն երեք վեզիրներն էին, որ զբաղվում էին բանակին վերաբերող հարցերի կարգավորմամբ, յուրաքանչյուրը բանակի մի հատվածի հարցերով: Վեզիրե սարքարե ղուրչին[3] ղուրչիների, յուզբաշիների, եասավոլների[4] հատկացվող թիուլի[5] և այլ եկամուտների կապակցությամբ մեծ վեզիրի հրամանը ստանալով ղուրչիբաշին[6] հաստատում և գործադրում էր[7]: Վեզիրե թոֆանգչիանը թոֆանգչիներին (հրացանակիրներին) վերաբերող բոլոր ֆինանսական հարցերով էր զբաղվում: Թոֆանգչիներին, յուզբաշիներին, մինբաշիներին և մունետիկներին հասանելիք աշխատավարձի, համեսալեի և թիուլի բոլոր հարցերը նրա միջոցով էր կարգավորվում: Նա թոֆանգչիների ստուգման օրը, որ կատարվում էր շահի ներկայությամբ, արքունիքին հաշվետվություն էր ներկայացնում[8]: Վեզիրե թուփխանեն, իր հերթին, զբաղվում էր թուփխանեին (հրետանի) վերաբերող բոլոր ֆինանսական հարցերով, ինչպես նաև թուփչիներին, յուզբաշիներին, մինբաշիներին և թուփխանեի ջարչիներին(մունետիկներ)[9] հասանելիք աշխատավարձի, համեսալեի և թիուլի կարգավորման հարցերը նրա միջոցով էին կատարվում[10]: Վեզիրե սարքարե ղոլամանը[11], իր հերթին զբաղվում էր ղոլամներին (ծառաներին) վերաբերող բոլոր ֆինանսական հարցերով: Յուզբաշիների ղոլամների, եասավոլանե ղուրի[12], ջազայերի անդազ մունետիկների[13], հասանելիք աշխատավարձի, համեսալեի և թիուլի հարցերը նրա միջոցով էր կարգավորվում: Նա ղոլամների ստուգման օրը, որ կատարվում էր շահի ներկայությամբ արքունիքին հաշվետվություն էր ներկայաց-

---

[1]Սահեբջամ - صاحبجمع -ֆինանսական պատասխանատվություն կրող պաշտոնյա:

[2] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 34-35:

[3]Վեզիրե սարքարե ղուրչի – وزیر سرکار قورچی – պարսկերեն-ղուրչիների աշխատանքները վերահսկող վեզիր:

[4]Եասավոլ- یساول– պարսկերեն հեծյալ պահակազորային:

[5]Թիուլ –تیول - թիուլ էր կոչվում պետական այն հողերը, որոնք զանազան ծառայությունների դիմաց ավատների ձևով տրվում էին պաշտոնյաներին:

[6]Ղուրչի բաշի- قورچی باشی – թագավորական հեծյալ գվարդիայի պետ:

[7] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 36-37:

[8] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 38-39:

[9]Մունետիկ -جارچی – պարսկերեն ջառչի նշանակում է՝ այն անհատը, որ լուրերը բարձր ձայնով հայտարարում էր, ազդարար, սուրհանդակ:

[10] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 39-40:

[11] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 37-38:

[12]Եասավոլանե ղուր- یساولان قور- պարսկերեն առաջատար հեծյալ հրացանակիր:

[13]Ջազայերի մունետիկների -جارچیان جزایری انداز - սեֆյան ժամանակաշրջանի մունետիկներ, որոնք ծառայում էին վեզիրե սարքարե ղոլամանի վերահսկողության ներքո:

նում: Վեզիրե սարքարե ֆեյզե ասարի աշխատանքը հողագործական տարածքների, այգիների, ջրուղիների, անշարժ գույքի, ջրմուղների խնդիրներով զբաղվելն էր, որոնց եկամուտների մեկ չորրորդը ստանում էին ենթականերից և վարձակալներից, եկամուտը ստանալուց և կնքելուց հետո հանձնում արքունիքին: Նա պիտի հետամուտ լիներ շրջանների բարեկարգման խնդիրներով[1]: Սպահանի վեզիրը զբաղվում էր խալեսե տարածքներին վերաբերող գումարների և խանութներին վերաբերող հարցերով: Նա հետևում էր, որ որևե տարածք անմշակ չմնա և հողի մշակման, սերմացուի հանձնման, աշխատողների վճարման և հողագործին օժանդակելու պարտականություն ուներ: Խասսեե շարիֆեի հողագործական գույքերի և տարածքների համար վարձակալներ ու հսկիչներ գտնելու և հողագործության համար աշխատող ուժ հայթայթելու պատասխանատուն էր: Նաև հսկում էր, որ ժամանակին հավաքվեին դիվանի համար գանձվող հարկերը: Սպահանին վերաբերող առևտրի կազմակերպումը և այդ գործունեության փաստաթղթերը հանձնում էր բոյութաթի սահեբջամներին[2]: Սպահանի վեզիրի պարտականությունը ղեկավարների որոշման գործն էր, որը կատարվում էր քալանթարին տեղեկացնելուց հետո: Սպահանի վեզիրը գումար էր ստանում, որը ծախսում էր դիվանի կարիքների համար, և տարվա վերջում ծախսերին վերաբերող փաստաթղթերը հանձնում էր բարձրագույն դիվանի վեզիրին[3]: Վեզիրե սարքարե էնթեղալիի պարտականությունն էր կազմակերպել և հսկել հողագործությանը հատկացված հողատարածքների, այգիների, շենքերի, ջրամբարների, ջրմուղների և հողագործական այլ կառույցների աշխատանքը, որոնց եկամուտների մեկ չորրորդը նա գանձում էր գյուղացիներից կամ այդ տարածքները վարձակալության վերցրած հողագործներից: Հողագործության համար հարկերի հաշվին հողագործներին սերմացու տալու և օժանդակելու գործը նրա պարտականությունների մեջ էր մտնում: Վնասների, հողային կամ բնական աղետների ժամանակ նա էր ստուգում և հաստատում վնասների չափը և հայտնում բարձրագույն դիվանի վեզիրին: Նա էր նշանակում բերքի խորհրդատուին, հողի չափագրողին և հաշվապահ գրագիրներին, որոնք տեղյակ էին տարածքների խնդիրներին: Նրանց հետ այդ վայրեր այցելելով՝ քննում էր հողագործության վիճակը: Նա, ընդունված կարգի համաձայն, առանձնացնում է գյուղացու միջոցով դիվանին հատկացվող մասերը: Հողագործներին համախմբելու, հողագործության զարգացման, զանազան շինությունների ու ջրանցքների վերանորոգման և նորերի կառուցման և խալեսե տարածքների ինչպես նաև իր ենթակաների և աշխատողների պաշտպանությունը ամբողջությամբ մտնում էին նրա պարտականությունների մեջ[4]:

Ըստ «Թազքիրաթ ալ-մուլուքի» նազերե(վեզիրե) բոյութաթի աշխատավարձը 360 թուման ու 1000 դինարից ավելի էր: Բացի այդ նրան նաև թիուլ և համեսալե էր հատկացվում[5]: Վեզիրների աշխատավարձի կապակցությամբ «Թազքիրաթ ալ-մուլուքը» տեղեկացնում է, որ վեզիրե սարքարե ղուրչիանը՝ 100 թուման, վեզիրե

[1] ميرزا سميعا تذكره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 44:

[2] Բոյութաթի սահեբջամներ-صاحب جمع بيوتات - մոնղոլների ժամանակաշրջանում հարկահանները սահեբջամ էին կոչվում: Սեֆյան ժամանակշրջանում սահեբջամե բոյութաթ էին կոչվում արքունական արհեստանոցների գույքերի հավաքագրման պատասխանատուները:

[3] ميرزا سميعا تذكره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 44-46:

[4] ميرزا سميعا تذكره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 46:

[5] ميرزا سميعا تذكره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 55:

սարքարե ղոլամանը՝ 100 թուման, վեզիրե թոֆանգչիանը՝ 50 թուման, վեզիրե թուփխանեն՝ 50 թուման էին ստանում, իսկ նրանց եկամուտների կապակցությամբ ավելացնում, որ նրանց էն'ամը[1], թիուլը յուրաքանչյուրի համար 200 դինար, իսկ յեքսալե[2] և համեսալե թանխահից[3] 45 դինար ռոսում[4] էին ստանում: «Թազքիրաթ ալ-մուլուքում» հիշատակված մնացած վեզիրների եկամուտների վերաբերյալ որևէ հիշատակության չենք հանդիպում[5]: Վերը բերված թվերը «Թազքիրաթ ալ-մուլուքում» նշվում են որպես հիշյալ պաշտոնյաների պաշտոնական աշխատավարձեր, որ նրանք դիվանից էին ստանում:

Սեֆյան Իրանի քաղաքները կառավարվում էին քալանթարների կամ քաղաքապետների կողմից, որոնք նշանակվում էին տեղի ազնվականության ներկայացուցիչներից: Քալանթարների պարտականությունների մեջ էին մտնում հարկերի հավաքումն ու արքունի գանձարանին հանձնելը, ինչպես նաև քաղաքի խնդիրների կարգավորումը: Քալանթարը պարտավոր էր քաղաքի բնակիչների շահերը պաշտպանել պետական բարձրաստիճան պաշտոնյաների կամայականություններից: Նա միջնորդի դեր էր խաղում քաղաքի բնակիչների, երկրի կենտրոնական և վիլայեթների իշխանությունների միջև: Նրա հիմնական պարտականությունը քաղաքի բնակիչների և արհեստավորների համքարությունների միջև տուրքերի բաշխումն էր: Նա նաև հարկերի ու տուրքերի գանձման պատասխանատուն էր: Նմանօրինակ պարտականություն ուներ գյուղապետը գյուղերում: Մանր առևտրականները և զանազան համքարությունների աշխատողները պարտավոր էին անվճար աշխատել, ինչպես նաև բոնիչե[6] կոչվող հարկ վճարել: Յուրաքանչյուր համքարության համար բոնիչեի չափը որոշվում էր քալանթարի կողմից[7]: Թեև քալանթարը ընտրվում էր տեղական ընտանիքներից, սակայն նրան պաշտոնի նշանակելու և աշխատանքի անցնելու իրավունքը հաստատվում էր անմիջապես շահի կողմից[8]:

Ըստ «Թազքիրաթ ալ-մուլուքի» մայրաքաղաք Սպահանի քալանթարի պարտականությունները հետևյալն էին. «Գյուղապետների[9] և համայնքների վստահված անձանց նշանակումը: Այս եղանակով յուրաքանչյուր շրջանի բնակիչները ներկայացնում են իրենց համայնքի վստահված անձանց, որոշում նրա աշխատավարձը, նշում գրությամբ և նաղիբի[10] կողմից կնքված հանձնում են քալանթարին: Նրա համար հրաման և խալաթ (պաշտոնի համար տրվող հագուստ, թիկնոց) են ստանում: Այնուհետև նա զբաղվում է նրանց վերաբերող հարցերի կարգավորմամբ: Տարվա առաջին

---

[1]Էն'ամ-انعام-նվեր:

[2]Յեքսալե- یکساله – միայն մեկ տարի վճարվող գումար:

[3]Համեսալե թանխահ- تنخواه همه ساله – յուրաքանչյուր տարի վճարվող գումար:

[4]Ռոսում-رسوم– գույքով կամ բնամթերքով վճարվող աշխատավարձեր:

[5] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 60:

[6]Արհեստավորների համար որոշված հարկեր:

[7] سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی (مجموعه مقالات: مقاله:ظهور دولت نوین ایران در دوره صفویه)، ترجمه: عباسقلی غفاری فرد/ محمد باقر آرام، تهران، 1382:,(ՍիուրիՌոջեր, Թահղիղաթի դար թարիխե Իրանե ասրե Սաֆավի, մաջմուե մաղալաթ, մաղալե, Զոհուրե դուլաթե նովինե Իրան դար դորե Սաֆավիյե, թարջոմե Աբասղոլիե Ղաֆարիֆարդ/Մոհամմադ Բաղերե Արամ, Թեհրան, 1382),էջ 186:

[8] نویدی داریوش، تغییرات اجتماعی- اقتصادی در ایران عصر صفوی(قرن شانزدهم و هفدهم میلادی)،ترجمه هاشم آقاجری، تهران، 1368 (Նավիդի Դարիուշ, Թաղիրաթե էջթեմաի-էղթեսադի դար Իրանե ասրե Սաֆավի (ղարնե շանզդահոմ վա հեֆդահոմե միլադի), թարջոմե Հաշեմե Աղաջարի, Թեհրան, 1368), էջ 176:

[9]Սպահանի քալանթարի պարտականությունների մեջ էին մտնում, ոչ միայն Սպահան քաղաքի այլ նաև մայրաքաղաքի շրջակա գյուղերի աշխատանքների վերահսկողությունը ևս:

[10]Նաղիբ -نقیب- քալանթարի փոխանորդին կամ ներկայացուցչին նաղիբ էին կոչում:

երեք ամիսը քալանթարը և նաղիբը, բոլոր համքարություններից ներկայացուցիչներ ընտրելով՝ գնում են Սպահանի արքունիքի նաղիբի (ղեկավարի) մոտ, յուրաքանչյուրի համար որոշում բոնիչէ և այն հաստատելով հանձնում քալանթարին: Այնուհետև վեզիրի, քալանթարի և մոսթովֆիի[1] կողմից կնքված բարաթներով, փոխանցման գրասենյակների միջոցով նրանց համար նշանակված բոնիչեները հաստատվում են և հանձնվում քալանթարին: Համքարությունների կողմից բոնիչեի և նրանց աշխատանքային հարցերի քննարկումը կատարում է քալանթարը: Նա էլ, պետության շահերը հաշվի առնելով, քննում և հարցին լուծում է տալիս: Եթե որևէ կերպ ենթակաների և գյուղացիների նկատմամբ բռնություն գործադրվեր, բողոքարկուն գալիս էր քալանթարի մոտ, վերջինս պարտավոր էր բողոք ներկայացնող գյուղացու խնդիրը, որ իր իրավասության սահմաններում էր քննել և լուծում տալ, այլապես բողոքը ներկայացվում է դիվանի վեքիլներին (փաստաբան): Նրա պարտականությունն էր թույլ չտալ, որ ուժեղները թույլերի նկատմամբ բռնություն գործադրեն, որպեսզի անեծքի պատճառ չլինեին: Նա միշտ հաշտարարի դերում պիտի լինի, որ թագավորի համար կարողանա շահել ենթակաների բարի աղոթքները»[2]:

Ժամանակաշրջանի պաշտոնների և նրանց գործառույթների վերաբերյալ բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել ժամանակաշրջանի վավերագրերում, որոնք մեծ արժեք ունեն պատմական իրականության ոչ միայն բնութագրման, այլև վերարժեքավորման ու ժամանակաշրջանի վարչական պատմության իրականության արտացոլման տեսակետից: Քալանթարի պաշտոնի մասին հետաքրքրական մանրամասներ է բովանդակում Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոնում պահպանվող շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը, որով Միրզա Մոհամմադ Ջաբերին նշանակվում է Սպահանի Քալանթար: Հրովարտակը կարևոր է Սեֆյան շահերի կողմից ենթականերին պաշտոնի նշանակելու եղանակի և պարտականությունների զատորոշման առումով: Նշանակելով վերոհիշյալին այդ պաշտոնում՝ նրան հրահանգվում էր՝ «....նա, կատարելով իր պարտականությունները, բարեխղճորեն վերահսկի, որ ուժեղների կողմից թույլերը և ենթակաները ճնշման չենթարկվեն....Իսկ մայրաքաղաքի բոլոր ղազիները(դատավորները) և բնակիչները, քալանթարին իրենց գլխավորը համարելով՝ ենթարկվեն նրա խոսքին ու որոշումներին, ...արհեստավորները, գյուղապետերը և շրջանների գլխավորները առանց նրա գրավոր իրավունքի որևէ հարցում իրենց ենթակաների նկատմամբ ինքնուրույն որոշումներ չկայացնեն, քանի որ նրան է վերապահված այդ անհատների պաշտոնների փոփոխության իրավունքը....»[3]:

«Թազքիրաթ ալ-մուլուքի» մեջ Սպահանի քալանթարի պարտականությունների վերաբերյալ նույնպես տեսնում ենք մոտավորապես նույն բացատրությունը, ինչ վերը մեջբերված վավերագրում: Փաստորեն վավերագիրը գալիս է հաստատելու «Թազքիրաթ ալ-մուլուքի» մեջ պահպանված տեղեկությունը այդ հարցի շուրջ:

Շահ Աբբաս Ա-ն իր կողմից Սպահան բռնագաղթեցված հայերին հատուկ արտոնություններ շնորհեց՝ թույլատրելով, որպեսզի նրանք առանց արգելքի կատարեն իրենց քրիստոնեական և հոգևոր ծեսերը, գումար հատկացրեց եկեղեցիների կա-

---

[1]Մոսթուֆի-مستوفی– հաշվապահ, գանձարանի մատյանների լրացման պատասխանատու:

[2] میرزا سمیعا تذکره الملوک(Միրզա Սամիա, Թազքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ.,էջ 47:

[3]Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոն, վավերագիր N. 997-61:

ռուցման ու վերանորոգման համար, նաև որոշ ինքնավարություն տվեց Նոր Ջուղայի հայությանը՝ նրանց անմիջական ղեկավարի պաշտոն հատկացնելով ի դեմս հայ քալանթարի: Վերջինս շատ բարձր եկամուտ ուներ[1]: Թավերնիեն[2] հիշատակում է, որ Խոջա Պետրոսի ունեցվածքը, բացի բազմաթիվ տներից, հողաբաժիններից, գոհարեղենից, ոսկյա իրերից, ամբողջությամբ կազմում էր շուրջ 40000 թուման[3]:

Ջուղայի հայ քալանթարների գործունեության կապակցությամբ Տեր Յովհանյանը նշում է.«Խոջա Սաֆարը և նրա եղբայր Խոջա Նազարը արքայական հրովարտակով վերակացուներ էին նշանակւել հայ ժողովրդի վրայ և որովհետև նրանք անւանի մարդիկ էին և թագաւորի աչքում սիրելի, ուղղակի շահ Աբբասին յայտնում էին ինչ խնդիր և գործ որ լինում էր ժողովրդի վերաբերյալ և թագավորը նրանց խնդրանքով և միջնորդութեամբ ամէն բարեշնորհումներ անում էր հայ ազգին, և եթէ պատահում էր, որ շահ Աբբասը հեռանար Սպահանից կամ պատերազմի էր գնում, Խոջա Նազարը գտնւում էր նրա սպասարկութեան մէջ՝ իբրև բարեկամ խորհրդական և Ջուղայի ժողովրդի մէջ ծանր խնդիր կամ որևէ գործ լինելու դեպքում, Խոջա Սաֆարը յայտնում էր իր եղբօրը՝ Խոջա Նազարին, նա ևս տեղեկացնում էր թագաւորին և նրա բարեհաճ հրամանն էր ձեռք բերում՝ ի նպաստ խնդրին կամ ժողովրդին: Ուստի մեծամեծներից կամ օտար ազգիներից ո՛չ ոք չէր համարձակւում որևէ նեղութիւն հասցնել հայ ժողովրդին՝ ակնածելով նրանից»[4]: Ջուղայի առաջին հայ քալանթարներ Խոջա Սաֆարը և Խոջա Նազարը մոտ լինելով շահին և արքունիքին՝ կարողացել են օգտակար լինել Նոր Ջուղայում հաստատված հայկական համայնքին և պաշտպանել նրանց շահերը: Փաստորեն, հայ քալանթարները իրենց կարևոր դերն են ունեցել Նոր Ջուղայի ներքին կյանքի կազմակերպման գործում:

Ինչպես տեսնում ենք, վեզիրի և քալանթարի պաշտոնները Սեֆյան վարչական ապարատի կարևոր օղակներից էին, իսկ «Թազքիրաթ ալ-մուլուքի» ծավալուն տեղեկությունները այդ պաշտոնյաների մասին հնարավորություն են տալիս առավել հստակ պատկերացում կազմել Իրանի տվյալ ժամանակաշրջանի կառավարման համակարգի մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1- سفرنامه تاورنیه، ترجمه: حمید ارباب شیرانی، تهران، 1382 (Սաֆարնամե Թավերնիե, թարջոմե Համիդ Արբաբ Շիրանի, Թեհրան, 1382:

2- پیتر جکسون/ لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت دوم) دوره صفوی،ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب، 1387: (Փիթեր Ջաքսոն/ Լորանս Լաքհարթ, Թարիխե Իրան Քամբրիջ, (ջելդե շեշոմ, ղեսմաթե դովոմ) դորեհ Սաֆավի, Թարջոմե Թեյմուրե Ղադերի, Թեհրան, էնթեղարաթե Մահթաբ, 1387:

---

[1] Իրականում Խոջա Պետրոսի եկամուտների մի մասը գալիս էր նրա վաճառականական գործունեությունից:

[2] Սեֆյան ժամանակաշրջանում Իրան այցելած իտալացի հանրահայտ ճանապարհորդ:

[3] سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی(Սիուրի Ռաջեր, Թահղիղաթի դար թարիխե Իրանե ասրե Սաֆավի(Մաջմուե մաղալաթ), նշվ. աշխ., էջ 70-171:

[4] Տեր Յովհանեան Յարութիւն Թ., Պատմություն Նոր Ջուղայի(Սպահան), աշխարհաբարի թարգմանեց Պօղոս Ա.Ի. Քինյ. Պետրոսեան, Նոր Ջուղա, Նաշրե Սալամ հրատարակչություն, 2008, էջ 72:

3- شوستر والسر سیبیلا، ایران صفوی از دیدگاه سفرنامه های اروپائیان(پژوهشی در روابط سیاسی و اقتصادی ایران (1502-1722)، ترجمه و حواشی دکتر غلامرضا ورهرام، تهران، انتشارات امیر کبیر،1364
(Շուսթեր Վալսեր Սիբիլա, Իրան ազ դիդգահե սաֆարնամեհայե ուրուփահյան, Թեհրան, Էնթեշարաթե Ամիրքաբիր, 1364:

4- باستانی پاریزی محمد ابراهیم، سیاست و اقتصاد عصر صفوی، تهران،1362(Բասթանիե Փարիզի Մոհամմադ Էբրահիմ, Սիասաթ վա էդթեսադե ասրե Սաֆավի, Թեհրան, 1362:

5- ترجمه: حسین هژیریان/ حسن اسدی، تهران، 1388فریر رانلد دبلیو ، برگزیده شرح سفرنامه شاردن،(Ֆրիեյր Ռանելդ Դաբլյու, բարգոզիդե Շարհե սաֆարնամե Շարդեն, թարջոմե: Հուսեյնե Հաժիրիան/ Հասանե Ասադի, Թեհրան, 1388:

6- میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، تصحیح دکتر یوسف رحیم لو، انتشارات دانشگاه فردوسی، مشهد، 1371(Միրզա Ալինաղիե Նասիրի, Ալղաբ վա մավաջեբե դորե սալաթինե Սաֆավի, թասհիհե դոքթոր Եուսեֆե Ռահիմլու, Էնթեշարաթե դանեշգահե Ֆերդոսի, Մաշհադ, 1371:

7- میرزا سمیعا، تذکره الملوک،دکتر محمد دبیر سیاقی، تصحیح و نشر تذکره ، انتشارات امیر کبیر،تهران، 1378(Դոքթոր Մոհամմադ Դաբիրսիաղի, Թասհիհ վա նաշր Թազքիրաթ ալ-մուլուք վա սազեմանե էդարիե հոքումաթե Սաֆավի, Էնթեշարաթե Ամիրքաբիր, Թեհրան 1378:

8- سانسون، وضع ایران در زمان شاه سلیمان صفوی، به اهتمام تقی تفضلی، تهران، 1985 (Սանսոն, Վազե Իրան դար զամանե շահ Սոլեյմանե Սաֆավի, բե էհթեմամե Թաղի Թաֆազոլի, Թեհրան 1985:

9- سفرنامه پیترو دلاواله، مترجم: شعاع الدین شفا، تهران، 1381 (Սաֆարնամե Փիեթրոդելավալե, մոթարջեմ: Շոաելդինե շաֆա, Թեհրան, 1381:

10- کمپفر انگلبرت ، سفرنامه، ترجمه کیکاووس جهانداری، چاپ سوم، انتشارات خوارزمی، تهران، 1363، 126-163 (Քեմփֆեր Ալնգելբերթ, Սաֆարնամե, Թարջոմե Քեյկավուսե Ջահանդարի, չափե սեվոմ, Էնթեշարաթե Խարազմի, Թեհրան, 1363:

11- اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، موسسه انتشارات امیر کبیر، تهران،1392(Իսքանդար Բեգ Թորքաման,Թարիխե Ալաամ Արայե Աբասի, Մոասեսե Էնթեշարաթե Ամիրքաբիր, Թեհրան, 1392:

12- سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی (مجموعه مقالات: مقاله:ظهور دولت نوین ایران در دوره صفویه)، ترجمه: عباسقلی غفاری فرد/ محمد باقر آرام، تهران:1382:,(Սիուրի Ռոջեր, Թահղիղաթի դար թարիխ-ե Իրան-ե ասր-ե Սաֆավի, (մաջմուե մաղալաթ, մաղալե, Զոհուր-ե դոլաթ-ե նովին-ե Իրան դար դորե Սաֆավիյե, թարջոմե Աբասղոլի-ե Ղաֆարի ֆարդ/Մոհամմադ Բաղերե Արամ, Թեհրան, 1382:

13- نویدی داریوش، تغییرات اجتماعی- اقتصادی در ایران عصر صفوی(قرن شانزدهم و هفدهم میلادی)،ترجمه هاشم آقاجری، تهران، 1368 (Նավիդի Դարիուշ, Թաղիրաթե էջթեմաի-էդթեսադի դար Իրանե ասրե Սաֆավի(ղարն-ե շանզդահոմ վա հեֆդահոմ-ե միլադի), թարջոմե Հաշեմե Աղաջարի, Թեհրան, 1368:

14- Տէր Յովհանեան Յարութիւն Թ., Պատմություն Նոր Ջուղայի(Սպահան), աշխարհաբարի թարգմանեց Պօղոս ԱԻ. Քինյ. Պետրոսեան, Նոր Ջուղա, Նաշրե Սալամ հրատարակչություն, 2008:

Жильберт Мешканбарянс, Должности везирей и калантаров в административной системе Сефевидского Ирана, - Исследования административной системы Сефевидского Ирана – одни из наиболее важных разделов ирановедческих исследований в соотнесении с армянским контекстом. Обширные сведения по Сафавидскому Ирану в отношении должностей и административных единиц представлены в книге “Tadkerat al-moluk” автора Mirza Samia, в которой четвертая и пятая главы содержат описание обязанностей и деятельности везиров и калантаров. Армяне города Новая Джульфа также имели своих собственных калантаров, которые избирались из наиболее богатых купеческих армянских семей, близких к Шаху. Их основные обязанности заключались в защите прав армян. В данном изложении показано, насколько значительны были должности везирей и калантаров в администрации сефевидов.

Jilbert Meshkanbarians, Positions of Vezires and Kalantars in the Administration System of Safavid Iran, - Research on administrative system of Safavid Iran is one of the essential fields of Iranian studies with regard to the Armenian affairs. Safavid Iran's extensive information about the positions and administrative units has been presented in the book “Tadkerat al-moluk” by Mirza Samia, whereby the fourth and the fifth chapters provide data about the vezirs’ and kalantars’duties and activities. The Armenians of New Julfa also had their own kalantars who were selected from the most rich merchant Armenian families that were close to the shah.Their main duties were defending Armenian rights. The study shows that the positions of vezirs and kalantars were significant in the system of the Safavid administration.

Ժիլբերթ Մեշքանբարյանս - ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի, հայցորդ: